

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յր. Մաթևոսյան, «Զեզոք գոտի», դրամա:

### DRAMMA GRANATA MATEVOSYANA "НЕЙТРАЛЬНАЯ ЗОНА"

**V. R. GRIGORYAN**

Драма Гранта Матевосяна "Нейтральная зона" остается в истории армянской драматургии как уникальное художественное произведение. Затронутые в ней проблемы, связанные с событиями начала 20-го века, с нашей историей, с психологией, с мироусерданием, с нашей сущностью, преподносятся с большим художественным мастерством. Анализируется как содержание, так и ее композиция.

### THE DRAMA "NEUTRAL ZONE" AFTER HRANT MATEVOSYAN

**V. R. GRIGORYAN**

The drama of Hrant Matevosyan "Neutral Zone" remains in the history of the Armenian drama as a unique work of art. The problems, discussed in it and reflecting the events of the early 20-th century, our history, psychology, world view, and our essence, are presented with great artistic skills. We analyze both the content and its composition.

## ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԻ «ՍԻԴՐԱՐԹԱ» ՎԵՊԻ ԻՆՔԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՇԵՇՏԸ

**Ա. Յ. ԱՌԱԲԵԼՅԱՆ**

Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Յայտնի է, որ «Սիդրարթա» վեպը հեղինակը՝ Յերման Հեսսեն, անվանում է «հնդկական բանաստեղծություն» և վեպի առաջնային ինֆորմացիոն հիմքը գլխավորապես կապված է Արևելքի հետ, բայց այնտեղ հավասարապես ներկայացված են ոչ միայն արևելյան, այլև արևմտյան մշակույթներն՝ իրենց հիմնական գծերով։ Յերման Հեսսենի «Սիդրարթա» վեպն ամփոփում է Արևելքի հետ մեծ գրողի ունեցած առնչությունների մի կարևոր փուլ։ «Սիդրարթան» լույս աշխարհ եկավ 1922-ին՝ իբրև արդյունք և հաղթահարում Հեսսենի 10-ական թթ. հոգևոր ծանր ճգնաժամի։

Վեպի քննության կապակցությամբ կարևորում ենք հեղինակի երեք դատողություն։

Առաջին. «Ես կրկին անհաշտ էի /Հեսսեն խոսում է 10-ական թթ. վերը նշված հոգևոր ճգնաժամի մասին/ ինձ շրջապատող աշխարհի հետ ...ինձ կրկին հետևում էին անհաջողությունները, և ես կրկին ողբալի մենակության մեջ էի... Այդուամենայնիվ այս անգամ ես ստիպված էի զբաղվել ինքնաքննությամբ...»

Քանզի ինձ համար՝ պարզ դարձավ՝ մեղադրել աշխարհին խելագարության և դաժանության համար իրավունք չունի ոչ մի մարդ, ոչ մի աստվածություն, իսկ ին մասին էլ խոսք չկա: Այսպիսով, եթե ես չեմ հաշտվում ողջ աշխարհի հետ, դա նշանակում է, որ անկարգության աղբյուրը պետք է որ իմ մեջ գտնվի...»<sup>1</sup>:

Երկրորդ. «Իբրև մարդկային իդեալ ինձ երևում է ոչ թե որևէ առաքինություն կամ որևէ հավատ, այլ բարձրագույն մի բան, որին մարդիկ կարող են ձգտել, դա ներդաշնակության հնարավորությունն է անհատի հոգում: Ով տիրապետում է այդ ներդաշնակությանը, նա ունի այն, ինչ հոգեվերլուծությունը մոտավորապես անվանում է լիբրիդոյի ազատ հնարավորություն և որի մասին նոր Կտակարանը ասում է. «Ամեն ինչ ձերն է»<sup>2</sup>:

Երրորդ. «Կյանքի մոգական ընկալումը մշտապես իմ սրտովն էր, ես երբեք չեմ եղել «ժամանակակից մարդ», և միշտ գտնում էի, որ Յոֆմանի «Ռուկե ծաղկամանը» կամ նույնիսկ «Շենրիխ ֆոն Օֆտերդինգենը» լավագույնն են, քան համաշխարհային պատմության և բնագիտության բոլոր դասագրքերը»<sup>3</sup>:

Առաջին դատողությունը վկայում է Շեսսեի համար աշխարհայացքային կարևոր մի խնդրի մասին, այն է՝ 10-ական թթ. վերջին, երբ դեռ ծևավորման մեջ էր «Սիդհարթան», աշխարհի հետ մարդու անհաշտության իհմքը պետք է փնտրել ոչ թե աշխարհի, այլ մարդու մեջ<sup>4</sup>: Սա հոգեվերլուծության, մասնավորապես Կարլ Յունգի վերլուծական հոգեբանության՝ Շեսսեի վրա ունեցած ազդեցության հետևանք է: «Պատահական չէ, որ հետագայում /1931/ հեղինակն այս վեաը, «Մանկան հոգին», «Քլայնը և Վագները», «Քլինգորի վերջին ամառը» գործերի հետ, ընդգրկեց խորհրդանշական «Դուրսը և ներսը» ժողովածուի մեջ, մատնանշելով աշխարհից դեպի մարդու մեկնելու դրանց միասնականությունը:

Երկրորդ դատողությունն անփոփում է նեղաշնակության հենց այն իդեալը, որ մեկ տարի անց, հոգեվերլուծության օգնությամբ, մարմնավորվեց Սիդհարթայի մեջ:

Երրորդ դատողությունը մեզ կապում է Շեսսեի արձակի պոետիկային բնորոշ խոսքի մոգականության հետ: Մոգականության մասին, իբրև աշխարհընկալում, Շեսսեն հաճախ է խոսում տարբեր առիթներով: «Մոգությունը մեր ընտանիքում և իմ կյանքում սովորական գործ էր», - կարդում ենք «Կախարդի մանկությունը» ինքնակենսագրության մեջ, որտեղ գրողը պատմում է հոգու և առարկաների միջև անսովոր կապ ստեղծելու իր վաղեմի սովորության մասին: Ինչպես ցույց է տալիս Շեսսեի գեղարվեստական փորձը, նա մոգությունից և միստիկայից չի բաժանվում ողջ կյանքի ընթացքում/ միստիկա և մոգություն բառերը Շեսսեն, սովորաբար, գործածում է զուգահեռաբար՝ իբրև նույնիմաստ հասկացություններ/: Դրա վկայությունն են բազմաթիվ նամակները, հոդվածները և գեղարվեստական

<sup>1</sup> Г. Гессе, Собр. соч., т. 3, 421.

<sup>2</sup> Hermann Hesse, Gesammelte Briefe, Bd 2, 470.

<sup>3</sup> Г. Гессе, Собр. соч., т. 3, 403.

<sup>4</sup> Թ. Էլիոթի «Ընտանեկան հավաք» չափած պիեսում աշխարհի և մարդու հարաբերության հակառակ պատկերն է: Այստեղ հերոսն ասում է՝ Այսպիսով դու պետք է հավատա՞/ Որ ես տառապում եմ տեսիլիք/ Ոչ իմ խիոճը, ոչ էլ իմ միտքն է / Ճիվանդ, այլ աշխարհը, / Որտեղ ստիպված եմ ապրել (տողացի թարգմանություն):

Երկերը: «Դուրսը և ներսը» պատմվածքում նա տալիս է մոգական մտածողության իր բնորոշումը. «Ոչինչ դրսում չէ, ոչինչ ներսում չէ, որովհետև այն, ինչ դրսում է, միաժամանակ նաև ներսում է»: Մոգական մտածողությունը իր բարձրակետին հասնում է «Քլինզգորի վերջին ամառը» վիպակում, որտեղ արվեստագետ Քլինզգորը իսկական մոգ է, այսինքն կախարդ, ով կարողանում է իրականությունը կերտել ըստ իր մտածողության:

Երեք դասողություններն ել, մեր կարծիքով, ուղղակիորեն կապվում են արևելյան թեմայի հետ և իրենց ամբողջական արտահայտությունը ստանում հենց «Սիդհարթայում»՝ պայմանավորելով վեպի երեք կարևորագույն շերտերը՝ ինքնակենսագրականը, փիլիսոփայականը և գեղագիտականը: Այս հիմնախնդիրների լուծման համար Յեսսեն ընտրում է ամենահոգեհարազատ և արտահայտիչ նյութը՝ Բուդդայի կյանքը և հնդկական արևելքն առհասարակ, որի մշակույթի միջավայրում մեծացել է Յերման Յեսսեն: Բայց «Սիդհարթա» վեպում Յեսսեն շատ ավելի լայն նպատակներ է հետապնդում, քան սոսկ Բուդդայի կյանքը և ուսմունքը:

1919թ., այսինքն այն ժամանակը, երբ Յեսսեն սկսում է աշխատել «Սիդհարթայի» վրա, կենսագիրն առանձնացնում է իրեւ «քարձրակետ, կենսական և ստեղծագործական բազմածայն ուրախության տարի, երբ ժամանակը չէր բավարարում ամեն ինչ ընդգրկել և արձանագրել»<sup>5</sup>: Յեսսեին հաջողվում է հաղթահարել հերթական ճգնաժամը, առաջնակարգ մի շարք գործերի թվում ստեղծել նաև «Սիդհարթան»: Վեպը ծնվել է ծանր երկունքով: Աշխարհից հեռացող Սիդհարթային պատկերելիս Յեսսեն դժվարություններ չի ունեցել, իսկ ահա աշխարհին Սիդհարթայի վերադարձը, որ վեպի կարևոր նվաճումն է, իրականացվել է մեծ ջանքերի, մանավանդ հոգեվերլուծության օգնությամբ: 1920-21թթ. օրագրերում հեղինակը վեպն անվանում է «իմ հնդկական վեպը, իմ բազեն, իմ արևային ծաղիկը»:

Անկասկած, «Սիդհարթան» խոստովանանքային արձակի տարրեր ունի, որոնք նրան կապում են Օգոստինոսից, Ռուսոյից, Գյորեից եկող գրական ավանդույթի հետ: «Սիդհարթայի» կյանքի պատմությունը, - ինչպես իրավամբ նշում է Յեսսեի կենսագիր Բերնհարդտ Ցելլերը, - ինչ-որ չափով սեփական կենսագրության իմաստավորում է, թեև էկզոտիկ հանդերձանքով»<sup>6</sup>: Յուգո Բալի կարծիքով «Սիդհարթա» վեպում Յեսսեն փորձում է գտնել Յնդկաստանի երաժշտությունը, որ դեռ օրորոցից /Wiegenfest/ ուղեկցել է նրան<sup>7</sup>:

Իրոք, «Սիդհարթան» նի քանի հիմնական գծերով կրկնում է հեղինակի՝ Յեսսեի, այդ շրջանի կյանքի և հոգեբանության կարևոր կողմերը:

**Առաջինը մենակ ապրելու, մենակեցության հակումն է:** Մենակությունը առհասարակ Յեսսեի իմտելեկտուալ աշխարհում ունի երկու դեմք, երկու մեկնաբանություն, մեկը ռոմանտիկական փախուստն է հասարակությունից, որ շատ բնորոշ է Յեսսեի տրամադրություններին թե պատանության և թե հասուն շրջանում: Այդ մենակության իդեալը պատկերված է «Թաքստոց» էսաեւմ /1917թ./.

<sup>5</sup> B. Zeller, 89.

<sup>6</sup> Նույն տեղում, 94:

<sup>7</sup> Mat. zu Hesses «Siddhartha», Bd. 2, 58.

«Կաղուց ի վեր իմ կյանքին ուղեկցում էր մի նվիրական երազանք: Նրա եռլրյունը կարելի էր բնորոշել մեկ բառով՝ թաքստոց: Տարբեր ժամանակներում այդ թաքստոցը երևում էր տարբեր կերպ: Մեկ այն տնակ էր Ֆիրվալդշտեդտի լճափին... Մեկ փայտահատի տնակ Ալպերում... Երբեմն քարանձավ էր Տեսսինի հարավում... Մեկ այլ անգամ՝ տոնս, որ հնարավորություն կտար մենակ ծանփորդելու... Երբեմն էլ ավելի համեստ տեսք ուներ՝ զնդամենը մի փոս հողի մեջ, փոքրիկ գերեզմանոց... Բայց նրա հմաստը և էռլրյունը մնում էին մշտապես անփոփոխ... թաքստոց: Այն ինձ թվում էր ցանկությունների վերջին սահման. միայն թե ինչ-որ տեղ գտնել այդպիսի մի որդ, այնպիսի թաքստոց, այնպիսի մի գաղտնարան, վստահելի և խաղաղ, ապա նաև անտառով ու ծովի տեսարանով՝ էլ ուրիշ ոչինչ պետք չէր, ամեն դեպքում չլինեին մարդիկ, որ հոգս են պատճառում, չլինեին նամակներ, հեռագրեր, մշակույթի շրջիկ գործակալներ: Այնտեղ թող լինի գետակ կամ ջրվեժ, թող այնտեղ, գորշ եղևնիների կատարմներին հանդարտ վառվի արկի լույսը, թող թևածեն թիթեռները և արածեն այծերը, ծու ածեն մողեսները կամ բույն դնեն ճայերը... ուրիշ ոչինչ պետք չէր, ամեն դեպքում չլինեին մարդիկ, որ հոգս են պատճառում, չլինեին նամակներ, հեռագրեր, մշակույթի շրջիկ գործակալներ: Ես այնտեղ չեմ գրանցվի ոչ մի հասցեամատյանում, հարկային ոչ մի ցուցակի մեջ... »<sup>8</sup>:

Մենակության մյուս դենքը կապված է ճգնաժամի հաղթահարումից հետո երևան եկած ստեղծագործական ուժերի աննախընթաց վերելքի հետ, որ գրողին պարտադրում էր առանձնության: Վեազը գրելու շրջանում Յեսսեն ապրում էր Մոնտանյոլայում/ Տեսսին, Շվեյցարիա/: Նրան երբեմն այցելում էին հին բարեկամները: Նա թեև ապրում էր գրեթե միայնակ, աղքատ, չնչին միջոցներով, սակայն ոգին բարձր էր, քանի որ տեսնում էր ճանապարհը: 1919թ. շոգ ամռանը սկիզբ է առնում նոր Յեսսեի ծևավորումը: Յեսսեն փորձում է ապրել իբրև մենակյաց, որի կերպարը մեզ ծանոթ է դեռևս «Անիվների տակ» և վաղ շրջանի մի շարք այլ գործերից: Մենակ ապրելու, հասարակությունից և կանոնավոր կյանքից հեռանալու Յեսսեի այս ծգտնան մեջ արդեն շատ բան հիշեցնում է Բուլղա-Սիղիարթային: Այս օրերին Յեսսեն շատ գրում է, նկարում, շրջագայում լեռներում: «Ես վերածվել էի փոքրիկ, եռանդուն գրողի,- կարդում ենք օրագրում,- հնամաշ հագուստներով և փոքր-ինչ կասկածելի օտարականի, որ սնվում է կաթով, բրնձով և մակարոնով, հազնելով մաշում է հին գգեստներ՝ մինչև դրանց թելը դուրս գալը, իսկ աշնանը անտարից ընթրիքի համար քարշ է տալիս շագանակներ: Սակայն փորձը, որի մասին խոսում եմ, հաջողվեց, և չնայած բոլոր դժվարություններին, այդ տարիները բոլորն էլ գեղեցիկ էին և բեղմնավոր: Կարծես իրապես արթնացած մղձավանջային քնից, որ ծգվել էր երկար տարիներ, ես ներծծում էի իմ մեջ ազատությունը, արևը, մենակությունը, աշխատանքը...»<sup>9</sup>: Սա բանաստեղծի, նաև մենակյացի այն վիճակն է, որ մշտապես կախարդել է Յեսսեին: Յրաշալի ալպիական բնությունը նրան դարձնում է նկարիչ և քնարերգու: Ստեղծագործական այս մակրնթացությունը ամենից լավ պատկերում է «Քլինգզորի վերջին ամառը» վիպակը. «Սկսվել էր կրոտ և դյուրագրգիր կյանքի ամառ: Տաք օրերը, որ շատ երկար էին տևում, դեռ

<sup>8</sup> Г. Гессе, Письма по кругу, 78-81.

<sup>9</sup> B. Zeller, 90.

բորբոքվում էին բոցավառվող դրոշների պես: Կարճատև ու հեղձուցիչ լուսնյակ գիշերներին հաջորդում էին նույնքան կարճատև ու տոք անձրևային գիշերները, որոնք շտապող երազների նման ու պատկերներով ծանրաբեռնված՝ տեմուզին խանդով ձգվում էին շողշողուն շաբաթների միջով... Ոչ ոք չէր կարող այդքան երկար ժամանակ, օր ու գիշեր իր բոլոր լուսերը, բոլոր հրաբուխները վառել, մշտապես, գիշեր ու տիվ կրակների մեջ կանգնած մնալ, ամեն գիշեր ժամերով կրակված միտք բանեցնել, միշտ վայելքի մեջ լինել, անընդիատ ստեղծագործել...»:

Յատկանշական է, որ «Սիդհարթայի» հետ գրված լինելով միևնույն շրջանում, «Քլինգգորի վերջին ամառը» նույնպես բովանդակում է Արևելքի թեմայի հետաքրքիր մեկնաբանություն: Գերմանացի միննեզինգեր Քլինգգորը իրեն գտնում է միջնադարյան չին բանաստեղծ Շուի մեջ, որի անվանք Շեստեն հնչեցնում է «Կյանքի ծառից» իր նշանավոր բանաստեղծությունը, որտեղ կարևոր խորհրդանշներ են յունգյան արխետիպեր՝ Կյանքի ծառը և Մեծ Մայրը: Խառնելով ժամանակային և տարածական սահմանները, Շեստեն կարծես ստեղծում է հոգկոր-մշակութային մեկ ընդհանուր միջավայր, որտեղ Արևելքը իրեն տեսնում ու ճանաչում է Արևմուտքի մեջ, իսկ Արևմուտքը՝ Արևելքի:

Մենակ ապրելու հակման մեջ երևան է զալիս Շեստեի և նրա հերոսի՝ Սիդհարթայի ընդհանրության նաև երկրորդ գիծը՝ **ապրել իմաստունի կյանք**: 1921-ին օրագրում նա գծագրում է իմաստունի այն մոտավոր կերպարը, որ եղել է իր իդեալը. «... ոչ արդարամիտ, այլ բարեպաշտ ամենից առաջ, ով այն ամենը, ինչ մատուցում են նրա զգացմունքները, իբրև աստվածահաճո, այսինքն՝ անհրաժեշտ, այսինքն՝ բարի ընկալելու ընդունակ լինի, որ մշտապես ի վիճակի է երկու ներհակությունները իբրև միասնություն տեսնել»<sup>10</sup>: Շեստեն նույնպես դա զգում է: Ինչպես ցույց է տալիս Ռյոտգերը, իմաստունի իդեալը այդ շրջանում ամբողջովին համակել էր Շեստեիմ<sup>11</sup>: Նա միաժամանակ հասկացել է, որ սրբին կամ իմաստունին հասնելը չափազանց դժվար է: Շեստեի 20-30-ական թթ. ստեղծագործություններում հատկապես սկսում է երևալ հերոսի կերպար, որը հետևողականորեն միավորում է իմաստունին և բանաստեղծին /Շալլեր, Քլինգգոր, Սիդհարթա, Կնեխստ/: Շեստեն կարծես ակնարկում է արվեստի ճանապարհով իմաստության հասնելու հնարավորության մասին, որը սակայն տանում է փակուղի: Այդ մասին Շեստեն գրում է. «... այդ խնդրի մասին երկար, շատ երկար խորհրդաժելուց հետո ես գտա, որ ինձ համար դեպի սուրբը տանող ճանապարհը պետք է անցնի արվեստի գոհաբերության միջով»<sup>12</sup>: Դրան Շեստեն պատրաստ չէր: «Սիդհարթա» վեպում դա ակնարկվում է Սիդհարթայի և նրա որդու տարանջատման ցավագին դրվագով: Վեպում Վեսուդեվան այդ իմաստունի կամ սրբի իդեալն է, որ օտարվել է Շեստեից և դառնալով գրական կերպար՝ մնացել իբրև երազանք:

Ընդհանրական երրորդ գիծը, որ Շեստեից անցնում է Սիդհարթային /կամ

<sup>10</sup> Mat. zu Hesses Sid. Bd. 1, 13. Hermann Hesse.

<sup>11</sup> Առավել մանրամասնորեն տես՝ B. Rottger, Die Gestalt des Weisen bei Hermann Hesse, Bonn, 1980.

<sup>12</sup> Mat. zu Hesses Sid. Bd. 1, 13. Hermann Hesse.

հակառակը՝ Սիդհարթայից Հեսսեին/, **սիրո գաղափարն** է: Ըստ Հեսսեի, սերը այն շաղախն է, որը հնարավոր է դարձնում մարդու և աշխարհի միասնությունը: Հակառակ դեպքում այդ հարմոնիան փլվում է: Թեև երիտասարդ, բայց Հեսսեն արդեն հասցրել էր զգալ կյանքի ծանրությունը, տեսել էր պատերազմ, ապրել ծնողներից տարանջատման ցավագին դրամա, կորցրել էր ընտանիքը: Այդ ամենի պատճառը, համոզված է Հեսսեն, այն է, որ «Խաթարված է սերը», որ «... ներաշխարհը մեր մեջ ագահորեն տենչում է երջանկություն, տենչում է մի ախորժելի ներդաշնակություն այն բանի հետ, ինչ մեզնից դուրս է: Այս դաշնությունը կխաթարվի այնքան ժամանակ, քանի դեռ մեր հարաբերությունը աշխարհի հետ այլ բան կլինի, քան սերը»<sup>13</sup>:

Պատահական չէ, որ Սիդհարթան ի վերջո հանգում է սիրո գաղափարին՝ իրեն կյանքի հիմնարար ակունք: Սա ուղղակի արձագանքն է Հեսսեի այդ շրջանի տրամադրությունների: Մենակության, բայց ստեղծագործական ուժերի վերելքի մեջ, Հեսսեն կրկին լցում է կյանքով, ստեղծագործական գլուխգործոցներ տալուց բացի գգում է նաև առօրյա սիրո պակասը: Նա ամուսնանում է երկրորդ անգամ՝ փորձելով գտնել կորցրածը, ստեղծել սիրո և ընտանիքի նոր աշխարհ:

«Սիդհարթայում» հերոսների և հեղինակի կենսագրական գծերի համընկնումները սրանով չեն ավարտվում: Սիդհարթայի և նրա հոր, Սիդհարթայի և նրա որդու հարաբերությունները հեռավոր կամ մոտ չափով կրկնում են Հեսսեի և իր հարազատների հարաբերությունները: Հեղինակի աշխարհայացքային սկզբունքների արտացոլումն է նաև այն, որ վեպում գրեթե բացակայում է սոցիալական ֆոնը: Եվս մեկ զուգահեռ. այն, որ Հեսսեն Սիդհարթայի մեջ տեսնում է բողոքականի, խոսում է նրանց հոգևոր ընդհանրությունների մասին: Պատահական չէ, որ Հեսսեն բողոքականի գծեր է տեսնում նաև Բուդդայի մեջ: «Այն, որ իմ Սիդհարթան ավելի բարձր է դասում ոչ թե ինքնաճանաչումը, այլ սերը, որ նա մերժում է դոգման և գլխավորը համարում է միասնականության ապրումը, կարող է ընկալվել իրեն քրիստոնեության նոր ձեռքբերում, իրեն ծշմարիտ բողոքական գիծ»:

#### АВТОБИОГРАФИЧЕСКОЕ В РОМАНЕ Г. ГЕССЕ «СИДГАРТА»

A. G. ARAKELYAN

Статья посвящена выявлению автобиографических фактов в романе Германа Гессе «Сидгарт».

#### THE AUTOBIOGRAPHICAL EMPHASIS IN THE NOVEL “SIDDHARTHA” AFTER HERMANN HESSE

A. H. ARAKELYAN

The article refers to the discovery of the autobiographical facts in the novel “Siddhartha” authored by Herman Hesse.

<sup>13</sup> Mat. zu Hesses Sid. Bd. 1, 303.